

ԿՅԱՆՔԻ ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՏԵՍԻԼԸ

(Իսահակ Իսահակյանի «Հեքիաթ արևի տակ» պոեմը)

Ձան,- Օնտես սիրտդ աշխարհով մեկ, հորիզոններից հորիզոն,
 Ճգվես տարածվես, խոսես սրտանց ամեն մի շնչի հետ,
 ինչի հետ, զգաս, հասկանաս, գգվես, գուրգուրես ամենին և
 արևի տակ, արևի պես սիրո շռայլ շառայլումով առատ,
 ջերմ փայես, փայփայես աշխարհը հանուր և արևի պես
 վատնվես աշխարհի մեջ աշխարհի համար:

Իս. Իսահակյան

1912 թ. Ալեքսանդրապոլում՝ Գևորգ Սամոյանցի տպագրատանը, առանձին գրքով լույս է տեսնում Իսահակ Իսահակյանի «Հեքիաթ արևի տակ» արձակ պոեմը, որն անմիջապես արժանանում է ընթերցողների ուշադրությանը: «Իսահակյանը մի ինքնուրույն դեմք է մեր գրականության մեջ», - նկատում է Նիկոլ Աղբալյանը¹:

«Հեքիաթ արևի տակ» պոեմն Իսահակյանը հեղինակել է 1911 թ., որի մասին տեղեկանում ենք մույն թվականին արված մամականիի էջերից. «Այսել եմ պոեմս գրել,- կարդում ենք հորաքրոջ որդուն՝ Գևորգ Աֆրիկյանին գրած մամակներից մեկում,-կարևորն այն է, որ առանց դրդիչ պայմանների չեմ գրում»²:

Ավելի վաղ անդրադառնալով «Հեքիաթ»-ի գրությանը, դժգոհելով գրական «անժամանակայնությունից»՝ բանաստեղծը գրում է.

«Այն, որ պետք է մենակության մեջ ստեղծեի, հիմա ընկերներիս շրջանում եմ անցկացնում, հիշելով մի ինչ-որ հասարակ, հիմար գարնանային դեպք, էպիզոդ և այն դարձնելով հսկայական, շքեղ, փառահեղ մի պոեմ, մի հեքիաթ: Ափսո՛ւս»³:

Ավելի ուշ՝ 1912 թ, երբ արդեն գիրքը հանձնել էր հրատարակության, Ավետիք Իսահակյանին ուղղված մամակներից մեկում կարդում ենք. «Ես հիմա քաղաքումն եմ ապրում: Մի փոքրիկ գիրք եմ հանձնել տպագրության...: Երբ գիրքս լույս տեսնի, կուղարկեմ քեզ: Հիմար բան է, բայց լավ կտորներ կան» (<ԱՍ, 170):

1 Նիկոլ Աղբալյան, «Իսահակ Իսահակյանի «Հեքիաթ արևի տակ»-ը, Հորիզոն, 1912, թիվ 260, էջ 224:

2 ՀԱԱ, ԻԻԱ, ֆոնդ 314, ցուցակ 11, գործ 9:

3 ՀԱԱ, ԻԻԱ, ֆոնդ 314, ցուցակ 11, գործ 26:

«Հեքիաթ արևի տակ»-ը հյուսված է բարձր տրամադրությամբ, սիրո խտացող, անսպառ մոլուցքով դեպի «երազ աղջիկը», կյանքի ու աշխարհի հավերժական գեղեցկությունները: «Հեքիաթ»-ն իսաիակ իսահակյանի գրական տաղանդի հաստնացման մի նոր փուլն էր, նոր ու առույգ տրամադրությունների հաստատման ձգտումը ետիեղափոխական շրջանի անկումային գրականության մեջ: «Երիտասարդ բանաստեղծի երկը հանդես է գալիս ծիշտ ժամանակին:

Հասարակությունը հոգնել էր արդեն դեկադենտական նվացող, վիատեցուցիչ գրականությունից. նա ծարավ էր թարմ, առույգ, ոգեշունչ երգերի: Այդպիսին էր հենց «Հեքիաթ արևի տակ»-ը¹:

Գիրքն իսահակյանը վերնագրել է «Հեքիաթ...», որը կապ չունի հեքիաթի գրական ժանրի հետ, սակայն ջերմ է ու անմիջական, հոգեհարազատ ընթերցողին, որքան հեքիաթը: «Գրվածքն իր ձևով գրական ոչ մի սովորական տեսակի չի հարմարում. սա ո՛չ վեպ է, ո՛չ պատկեր, ո՛չ գրույց, ո՛չ հեքիաթ. սա մի գեղուն է կամ լավ ևս մի խանդավառ հիացում սիրո գոյության և նրա արթնանալու առիթով՝ գարունքին», - նկատում է Նիկոլ Աղբալյանը²:

Բավականին վարպետությամբ իսահակը «հեքիաթ»-ին զուգակցել է «արև»-ը, որը կյանքի աղբյուրն է, գոյության խորհրդանիշը, էներգիայի փոխանցման հզորագոր դաշտը, մասնավորել գործողության վայրը՝ «արևի տակ»: Ուրեմն «Հեքիաթ»-ը բնության, աշխարհի ու տիեզերքի ներդաշնակ խաղն է, սիրո, գեղեցկության, երջանկության հայտնաբերման ուղին մարդկային կյանքում և այդ կարճատև ժամանակի զնահատումն ու արժևորումը արևի տակ, հավերժի առջև:

«Պոեմը նորարարական է վերնագրից սկսած...,- գրում է Նշան Մուրադյանը:- Ինչ-որ իսկապես անսովոր, հեքիաթային է, այն անսամձ, հորդացող, հեթանոսական ուրախությունն է, որով համակված է պոեմն ամբողջությամբ: Հեղինակը չի մտահոգվում ձևի, ինչ-որ գրական կաղապարի մասին. այդպես հունի մասին չի մտահոգվում գարնանային հեղեղը»³:

Ըստ ժանրի՝ «Հեքիաթ արևի տակ»-ն արձակ պոեմ է, որը բաղկացած է 20 գլուխներից՝ Ա-ից Ժ, ԺԱ-ից Ի, որոնք, չնայած գաղափարական տարբեր հարցադրումներին, սերտորեն փոխադրկապված են միմյանց: Գլխավոր հերոսն Արևագուն թագավորն է՝ արևից բխած՝ իբրև երիտասարդության, ջախելության, սիրո մարմնացում:

1 Արամ Ինժիկյան, «Մտերիմներ և մտորումներ», Եր., 1967, էջ 338:

2 Նիկոլ Աղբալյան, «Իսահակ իսահակյանի «Հեքիաթ արևի տակ»-ը, Հորիզոն, 1912, թիվ 260, էջ 220:

3 Նշան Մուրադյան, «Իսահակ իսահակյան», Սովետական Հայաստան, 1967, N 3:

«Հեքիաթի հերոսն էլ՝ Արևազունը, «թագավոր» է անվանված պայմանականորեն, նկատում է Արամ Ինժիկյանը, - ըստ էության նա անձնավորում է ջախելությունը, երիտասարդությունը: «Աշխարհը սեր է արևի տակ, սերը՝ հեքիաթ, կյանքը հեքիաթ է հեքիաթի մեջ, ջախելությունը՝ թագավոր...» (ՀԱՏ, 144): «Եվ նկատենք, - շարունակում է գրականագետը, - որ ժողովուրդն էլ թագավոր է կոչում Սորափեսային»¹:

Թույլ ուրվագծվող սյուժետային ընթացքով Իսահակյանը հյուսում է Արևի երկրի պատմությունը, ուր խնդրով ու տոնականորեն իշխում էր Արևազուն թագավորը. «Արևին մոտիկ մի երկրում մի ջախել թագավոր էր ապրում: Պայծառ, հզոր և իմաստուն էր նա, թշնամիների համար անհաղթ ու դաժան և բարեկամների համար սիրառատ. պատերազմի մեջ խիզախ և խաղաղության ժամանակ խանդավառ, ու նրա իշխանության օրերը ուրախ խնջույքի նման էին, և երկիրը ապրում էր փառքի և ուրախության մեջ» (ՀԱՏ, 115): Բայց հանկարծ խաթարվում է կյանքի բերկրալից ընթացքը. համընդհանուր անհոգության և խաղաղության մեջ թագավորը հանդիպում է մահվան սարսափին. նա ծանաչում է մահը. «Մի անգամ, երբ թագավորը շուքով, շքեղ վերադառնում էր հաղթական արշավանքից և զվարթ ու վսեմ անցնում էր շահաստանի միջով՝ ցնծության, հիացքի աղաղակների շփված խենթ, նրա ծիծաղող աչքերի առջև երևեցավ մահը մառ ու մռայլ» (ՀԱՏ, 115):

Ամայանում է Արևազուն թագավորի հոգին մահվան երկյուղից, փոխվում կենսախինդ տրամադրությունը, աշխարհը թվում դատարկ և ունայն, մարդկային կյանքն ու գործը դառնում է զուր. «Եվ թագավորը զգաց, հասկացավ աշխարհի ունայնությունը տխուր և մարդկային կյանքի սուտը զուր և նրա արեգական հոգին դարձավ մղու՛տ, մռայլ» (ՀԱՏ, 115): Մահվան տագնապները ծնում են հուսահատություն, մթագնում արարելու տենչը, որից զերծ չեն անգամ գորեղ հոգիները. «Եվ թողեց նա իր թագավորական գործերը անուշադիր և ամբողջի դեմ դարձավ անտարբեր:

Եվ այն արևին մոտիկ երկիրը խնջույքից սգի մեջ ընկավ...» (ՀԱՏ, 115):

Մահվան ցավագին, չնեկնաբանված ու անբացատրելի առեղծվածը, որը նաև կյանքի մեջ մարդու հավերժական մտատանջությունն է, մարդկանց մղում է որոնումների, ստիպում նոր եզրահանգումներ անել: Սակայն անզոր է մահկանացուն, անպարոյուն, անօգուտ են անցնում անգամ իմաստունների փորձերը. «Հավաքվեցին երկրի բոլոր փորձված իմաստուն մարդիկ, խորհեցին, խորհրդակցեցին և նրանց մտածած միջոցներն ամեն՝ թագավորին օգնելու համար, անցան ապարդյուն: ...Եվ օրեր անցան, անցան ամիսներ ու տարիներ, և թագավորը մնաց տխուր, միշտ լուռ» (ՀԱՏ, 116): Սա նաև

1 Արամ Ինժիկյան, «Մտերիմներ և մտորումներ», Եր., 1967, էջ 338:

դարաշրջանի մղծավանջային տրամադրությունների համապատկերն է, գրականության մեջ տիրող նիրվանան, այդ իրավիճակից ազատագրվելու դժվարին, բայց մասնապատկառողված փորձը:

Եվ կյանքի ու մահվան հակադրության մեջ բանաստեղծը բացահայտում է սիրո կենսագործող, արարչական ուժը, որն ընդունակ է վերափոխելու կյանքի ընթացքը, իմաստավորելու այն թեկուզ և երազի միջով: «Պատահեց, որ թագավորը երազում մի անուշ, սիրուն աղջիկ տեսավ, որ հրեղեն էր և հրաշքի պես, մի հեռու, հեռու աղջիկ և մի հոգեթով հեքիաթ լսեց այն աղջկա մասին ոսկե, ոսկե խոսքերով, և նրա պաղ, մռայլ հոգին լցվեց քնքուշ ջերմով և ծառագայթներով, և քաղցր, սրտանց լացեց թագավորը, լացեց ու խնդաց և թեթև, լուսավոր սրտով զարթնեց» (ՀԱՏ, 116):

Սերը հաղորդում է թարմություն, նոր լիցքեր ու շունչ է: Սիրո գերակայությունը լռեցնում է վիատության տրամադրությունը: Սիրով ջերմանում է թագավորի հոգին, վերագտնում նախկին խիճը: Իր հերթին աշխարհը լցվում է հրապույրներով, դարձյալ դրվում նույն գունախաղի մեջ. «Դուրս եկավ նա լույս աշխարհի, տեսավ առավոտի բարձր ու պայծառ արևը և տեսավ իր հայրենիքի հեռուները լուսավորիթ, ու ընկավ նրա մեջ, արևն ու աշխարհը ամբողջ ձուլվեցին նրա հոգու հետ, եղան նրա համար հարազատ, որովհետև արևն ու աշխարհը նրա տակ՝ այն երազի աղջկա հմայքով էին զարկված» (ՀԱՏ, 116):

Ռոմանտիկ ուղղվածությամբ, բոլորովին աննկատ Իսահակյանը տանում է դեպի երջանկության ուղին՝ մոռացության տալով թախիծն ու մահվան անձուկը:

Ուրեմն անկանխատեսելի է աշխարհը, նույնքան փոփոխական են տրամադրությունները. «Եվ կրկին պայծառ ու զվարթ էր թագավորը, ցնծող երկրի մեջ, ընկձված թշնամիների դեմ:

Ով գիտե, ինչպես է գալիս գարունը» (ՀԱՏ, 117):

Եվ նորից զվարթ ու կենսուրախ, հույսի ու խաղաղության ներշնչումներով շարունակում է ապրել Արևազուն թագավորը՝ ամենուր տարածելով սեր ու երջանկություն, փնտրելով հեքիաթ աղջկան. «Եվ պայծառ ու գեղեցիկ սկսեց թագավորել իմաստությամբ և կարող ու թափառել այն Աղջկան գտնելու փափագով-միշտ ջախել, սիրահարված:

Արևին մոտիկ էր թագավորի հայրենիքը մշտադալար, բերրի, հարուստ ծոցով և կյանքը հազարահանդես, բազմակերպ, անմահական աղբյուրի պես բխում էր այնտեղից:

Եվ թագավորը սիրում էր իր երկիրը և արևը մոտիկ, և բյուրաձև կյանքը նրա տակ, որ հրեղեն Աղջկա հմայքն էր վառել» (ՀԱՏ, 117):

Կյանքը դառնում է գեղեցկության, նորի հայտնաբերումների անվերջանալի շղթա. «Մեկն ու մեկը այդ աղջիկներից այն երազի Աղջկա ժպիտն ուներ,

մեկը՝ բույրը, մյուսը՝ շողը, մեկը՝ հայացքը Նրա, և նա, որ մի բանով նմանում էր նրան, թագավորի ցանկալին էր ու սիրելին» (ՀԱՏ, 118):

Սա սիրո մեջ մարդկային տրամադրությունների փոփոխականությունն է, իդեալականի հայտնաբերումը համեմատության մեջ ու նաև մեծ սերը, ամենուր ծավալվող, ամենքին բաժին համամարդկային սերը. «Իր թափառանքի ժամանակ պատահեց թագավորը մի հովիվ աղջկա, որի աչքերը նման էին այն երազական աղջկա ժաճանչավոր աչքերին, և սիրեց թագավորը նրան, խորն ու անհուն սիրեց» (ՀԱՏ, 118): Եվ ինչպես աշխարհում ամեն «երկրային» բան՝ սեր, երազ թե հեքիաթ, իր սկիզբն ու վերջն ունի, «այնպես էլ թագավորի առաջին սերը հովիվ աղջկա հետ, պատահեց, որ վախճանը հասավ նրանց սիրո, ու նրանք բաժանվեցին, և թագավորը սիրուն, սեզ ու սիրահարված գնաց հրեղեն Աղջկան գտնելու» (ՀԱՏ, 118):

Մեղմ ու խաղաղ է Իսահակյանի պատկերած սիրո աշխարհը, ընկալումը՝ պարզ ու շիտակ, ուր բաժանումն անգամ անցավ է, տրտմություն ու թախիծ չունի. «Այսպես սիրում ու թողնում էր թագավորը, սիրում ու նորից թողնում, և նա, որ ժաշակում էր նրա սերը հզոր՝ հեքիաթի մեջ էր ընկնում, և նա, որ հեռանում էր նրանից՝ օրհնում էր նրան » (ՀԱՏ, 118):

«Հանդիպումը ուրախություն է բերում, իսկ անջատումը տրտմություն չունի, սերը դառնում է մի օրհնություն, փրկություն մռայլ մտքերից, իսկ սերն ապրելն արդեն դառնում է մի կյանք հեշտին ու գեղեցիկ՝ առանց պարտավորությանց ծանր բեռի և խիթերի »¹:

Սակայն կյանքի հարափոփոխ ընթացքի մեջ մարդկային միտքն այդպես էլ չունի իր սահմանագիծը՝ փնտրում է ու որոնում: Անվերջ ու անհուն է հատկապես երազի գաղափարը, անհաս սիրո իդեալը. «Եվ չգտավ նա իր երազի Աղջկան, որովհետև գիտեցավ շատ աղջիկներ, որոնք մի-մի բանով նման էին նրան» (ՀԱՏ, 118):

Թվում է, Արևազունի հոգում էլ բախվում է նախաստեղծ Ադամի՝ Լիլիթի և Եվայի այդպես էլ չգտնված իդեալական միաձուլման տագնապը:

Իսահակյանը միաժամանակ սիրով ու խաղաղությամբ է ընկալում սերունդների հերթափոխությունը: Իսկ կյանքը, իրենց ու աշխարհը սիրով ընկալող, վաստակած մարդու համար մահն անգամ կորցնում է սարսափի ուժը, դառնում կյանքի ընդունելի ավարտ. «Երբ մեռավ թագավորը սիրուն ու սիրահարված, մեռավ և խնդաց, որ մեռավ» (ՀԱՏ, 118):

Սիրո գեղեցիկ իդեալին զուգակցվում է թունամյանական բարի ու «անմահ գործի» գաղափարը, որն այստեղ ևս օրհներգություն է:

1 Նիկոլ Աղբալյան, «Իսահակ Իսահակյանի «Հեքիաթ արևի տակ»-ը, Հորիզոն, 1912, թիվ 260, էջ 223:

«Որովհետև այս թագավորը հզոր, սիրուն էր արևի պես, ու նրա կյանքի օրերը պայծառ էին, արեգական, նրան գիտեցող բարեկամներն ու թշնամիք և բոլոր կանայք սիրեցին նրան, երգեցին կյանքը նրա, ինձ պես օրհնեցին հիշատակը նրա ու անվանեցին նրան Արևազուն» (ՀԱՏ, 118):

Հավերժի և անցողիկի գաղափարը ծավալվում է նաև «Հեքիաթ»-ի հաջորդական մասերում: Կյանքի հազարավոր ակնթարթների մեջ Իսահակյանը կարևորում է մանկության վերիուշը, որն իբրև ամենապայծառ շրջան, անդամնալի է: Անցնող գարունը կարող է կրկնվել, բայց մանկությունը միայն երազ է: Հավերժության առջև սահող ակնթարթ է նաև մարդկային կյանքը. «Աստղի պես, բույրի պես, երգի պես մանկություն»:

Գարունն անցավ ու էլի եկավ, ու էլի, էլի,-մանկությունս ու՞ր ես» (ՀԱՏ, 119):

Բանաստեղծի նպատակը երջանիկ ու լուսավոր կյանքի ստեղծումն է, որ մարդը կարողանա ապրել խինդով, մինչդեռ կյանքը խավարի ու անծուկի մեջ է. «Խաղողի այգին ծածկվում է ձյունով,- շառ, շառափնաթափ աղջիկը խամրում է, կնձռվում» (ՀԱՏ, 119):

«Հեքիաթն» աստիճանաբար հյութալցվում, ստանում է գաղափարական նոր հարցադրումներ: Գործողությունների ընթացքին միախառնվում է նաև ինքը՝ բանաստեղծը՝ իբրև մի նոր «Արևազուն», յուրովի բացահայտելով կյանքի իրական հրաշքը:

«Զրը՛նգ, զրը՛նգ...

Հեռու՛, հեռու՛, կանաչ ծամփաներով մի շողշողուն քարավան է շորշորում հոգնած, համրընթաց:

Հնդու թագավորի յոթը աղջիկները գնում են իրենց փեսաների մոտ: Ամենից փոքր քույրը կարոտով նայում է հեռուն, նրա աչքերը վառվում են, ու նա ծպտում է ինձ:

Զրը՛նգ, զրը՛նգ» (ՀԱՏ, 120):

Սիրո բացակայությամբ բանաստեղծն էլ ապրել է մռայլ ու թախիծ, տառապել մահվան սարսափից, բայց հիմա պայծառ է բանաստեղծական հոգին, սիրո զգացողությունը մի նոր կենսակերպ է փոխանցել նաև նրան. «Երբ գիտեցա Քո հեքիաթի հմայքը, Քո հրեղեն հեքիաթի հմայքը հզոր, իմ անհայտ, անմահ Աղջիկս, և հիմա ես հուսավառ ուխտավոր եմ այս աշխարհի վրա և կարոտս այրում է ինձ...»: «Երբ որ ես վհատ ու մոլոր էի և ինձ համար աշխարհը սուտ էր ու մռայլ, և՛ մահն էր ստույգ, և՛ մահն էր հավերժ:

Հիմա ես պայծառ եմ, հուսավառ, ինձ համար իմ սերն է հավերժ: Քո հեքիաթը ստույգ, թովիչ է Քո հեքիաթի լեզուն...» (ՀԱՏ, 121):

Գեղեցկությամբ ու անսահման հավատով լի է բանաստեղծի կարոտի և սպասման երազը.

«Իմ հեռավոր, հրեղեն, հրաշք-Աղջիկս: Ես չգիտեմ ով ես դու, ես չգիտեմ՝ ուր ես դու, միայն գիտեմ, որ պիտի գաս և անուշ, սիրուն պիտի լինիս դու» (ՀԱՏ, 122):

Սերը դառնում է տիեզերական կենսազգացողություն, գեղեցկության հայտնաբերումների միջոց: Ասես ողջ աշխարհն է բռնկված սիրով. «Երեկ անցան կռուները, կանչեցին, անուշ-անուշ կանչեցին նրանք, Զո անունը կանչեցին նրանք, ու նա ծորող մեղրի պես էր:

Այսօր փչեց հարավ-քամին, դաշտերի ծյունը հալեց, և Զո բույրն ու ջերմն էր շունչը նրա, և ես արդեն հարբած եմ, ծարավ» (ՀԱՏ, 122):

Սերը «Հեքիաթ»-ի ամենատևական զգացումն է: Պոեմի տարբեր մասերում Իսահակյանն անվերջ բարձրացնում է սիրո գաղափարը, բացահայտում լուսակերպ զգացումի կենսապարզ, վեհացնող ուժը: Մեծ է բանաստեղծի սերը, նույնքան բնական՝ անձնական ապրումի դրսևորումը: Բանաստեղծն անպատմելի քնքշանք ու հրապույր է զգում դեպի կինը. «Լույսս, իմ ոսկե լուսեղ կույսս, ինչքան եմ սիրում ես քեզ...

Շա՛տ... շա՛տ... շա՛տ...

Աշխարհքի չափ, երկնքի չափ ու էլ ավել, ավել, ավել...» (ՀԱՏ, 136):

Իր հերթին բանաստեղծին լույս ու ներշնչանք է փոխանցում ոսկե լուսեղ կույսը. «Դու նետել ես ինձ անուշ երազի մեջ, աշխարհս կապույտ ցնորք ես դարձրել դու ու ժամանակս թովիչ առասպելի շրջան...», փարատում մեծությունը վերերկրային լուսե զգացումներով. «Երբ մենակ եմ ես, դու աշխարհ դառած ինձ մոտ ես, երբ քեզ հետ եմ՝ աշխարհի պես է սիրտս...

Ես դնում եմ գլուխս քո ծնկների վրա, ես դնում եմ գլուխս քո կրծքի վրա, լսում եմ քո սրտի խոսքերը հզոր, և քո սուրբ մարմնից հորձանքվող ալիքները գորովի գրկում եմ իմ հոգիս ու նետում հեռու, հեռավոր հեռուները լուսեղեն...» (ՀԱՏ, 137), իսկ «օրերը մանկության պես քաղցր ու անչար են անցնում, և երազում վառած խորունկ, խորունկ, լո՛ւրթ, լուսավոր (գիտե՛ս մանկան աչքերը) ցնորքի պես դյուրական է աշխարհը ինձ համար...» (ՀԱՏ, 137):

Այս մեծ ու լուսավոր սիրով էլ բանաստեղծն ընկալում է աշխարհը, հաշտ ու խաղաղ նայում հակադիր երևույթներին. «Եվ տեսնում եմ ես տարերքի ստեղծագործությունն ու ավերումը, բեղմնավորումն ու քայքայումը, ծնունդն ու մահը մարդկանց, և մահն ու կյանքը հավերժական հյուսվում են իմ հոգում ծիածանի պես, և ծիածանը պայծա՛ռ է, պայծա՛ռ» (ՀԱՏ, 137):

Սիրո հավերժության երզը բանաստեղծը լսում է ամենուր՝ «ձամփաների, անապատների, անտառների և ապատների մեջ, դաշտերի և լեռների վրա», նրան պատմում են «արևը, քամին, բույրերն ու գույները...» (ՀԱՏ, 139):

Սիրով կյանքը հորդում է իբրև բանաստեղծություն, այն նման է հեքիաթի, իսկ գեղեցկություններին ականջալուր հոգու համար այդ հեքիաթն անվերջ է

ու անվախժան. «Ես լսում եմ ու գնում, լսում եմ ու կրկին գնում ազատ, հզոր, բախտավոր ու սիրահարված և դեռ չեմ լսել քո հեքիաթը ամբողջ» (ՀԱՏ, 140):

Սիրո ծավալման այս բյուր ձևերի մեջ խտանում է կենսասիրությունը. «Ես շրջում եմ արևի տակ ու սիրում եմ ամեն կյանք, ամեն ինչ, ամեն շունչ, որ Բո հեքիաթն է պատմում,

և սիրում եմ նրան, և լսում եմ նրան ու կրկին գնում եմ լսելու, սիրելու» (ՀԱՏ, 140):

Իսահակ Իսահակյանի սիրո մեղմ ու անարատ կանչերին երբեմն միահյուսվում է վայելքի, անկաշկանդ նվիրումի երգը: Այս տրամադրություններով Իսահակյանը կապվում է 20-րդ դարի սկզբին գրականության մեջ ծավալվող հեթանոսական շարժին: Ոգեկոչելով սերը, ուժն ու զեղեցկությունը՝ հեթանոսականները ցանկանում էին վերափոխել դարաշրջանի պաղ ու անկենդան տրամադրությունները: Իսահակ Իսահակյանի հեթանոսական մղումները ևս ուղղված էին առողջ միջավայրի ձևավորմանը: Բանաստեղծն այս կերպ փորձում էր ստեղծել երազած ու ցանկալի աշխարհը, հաղորդել ջերմ էներգիա, դրական լիցքեր: Ազատ կյանքի ու վայելքի նկարագրությունները «Հեքիաթ»-ում հաճախ բացվում են բնապատկերների միջոցով.

«Ի՞նչ եղավ գիշերը:

Լսեցի՞ր, որ խնդում ու ծչում էր գարնան քամին մոլեգնած...

Կրքից հարթած, խենթ, խուժողւժ հարձակվեց նա երկրի վրա, որ անվորով իր աղջիկական ձերմա՛կ, ձերմա՛կ անկողինն էր մտած և ավազակի պես գորաբար հափշտակեց նրա սերը կուսական-ծվեն-ծվեն դարձնելով հանդերձները նուրբ և պոկելով բոլոր հանգույցները, որ խանդոտ, թաքցնում էին նրա մարմինը թա՛րմ, փարթա՛մ (ՀԱՏ, 123):

«Ահա ձեզ գրության մի նոր ձև, մի երկարաշունչ ոգևորություն, որ ձգվում է գրվածքի առաջին էջից մինչև վերջինը՝ առանց թուլանալու, մի նոր լեզու, մի նոր պատկեր՝ լիովին ներդաշնակ ու զուգահեռ գրվածքի նյութին ու հիմնական գաղափարին»¹:

Հիմա պագշոտ արևի տակ, որ քամու պես ցոփ է, զոշ, հոլանի է երկրի կուրծքը արգավանդ և արևը տարփատենչ արձակում է իր հրերը առողիչ, ու լիրբ քամին բախտից խելառ, ցնորած, մեկ պատմում է գիշերին անցած,- թո՛ղ արևը կատաղի, մեկ իր վայրի կյանքը ապրած՝ թո՛ղ երկիրը նախանձի, թե ինչ անցյալ է ունեցել, ինչ գիշերներ, գաղտնիքներ՝ հեռու, անհայտ երկրներում՝ կրքոտ, առատ, արևոտ...» (ՀԱՏ, 123):

1 Նիկոլ Աղբալյան, «Իսահակ Իսահակյանի «Հեքիաթ արևի տակ»-ը, Հորիզոն, 1912, թիվ 260, էջ 223:

Մերթ համեմատաբար մեղմ են նկարագրությունները, հեթանոս ճգնաժամը՝ գուսայ. «Ինչպես չխնդամ, ինչպես չխնդամ,- քո հազար, հազար համբույրներն ու զգվանքները հրուտ, արևական ցմցուղ են բոցավառել իմ հոգում...

Արքայական նավի պես ես դու, լայն ու ուռճացած առագաստներով պայծառ, բարձած ազնիվ յուղերով ու գինիներով հազվագյուտ, արքայական նավի պես, որ բարձած է արքայական խրախճանքի համար:

Դեռ քեզ չտեսած, դեռ չլսած քեզ, ես զգում եմ քո հանդիսավոր երթը հպարտ, և հրեղեն ցնծանքով լցվում եմ ես, և քո աներևույթ բուրմունքների ու հրապույրների տարափի տակ հրդեհվում է իմ հոգին չտեսնված, չլսված հաճույքների խենթ խանդաղատանքով» (ՀԱՏ, 138), մերթ էլ բուռն ու տաքերային. սերը վերածվում է տոնակատարության, դառնում հեթանոսական խրախճանք:

«Տո՛ն է, տո՛ն, ամենատո՛ն...

Իմ սերը-անխիղորտ, արգավանդ կղզի, վայրենի կղզի, մթնած՝ հսկա, գունեղ բույսերով, խեղդող՝ սուր բույրերով, հույզերով,- ջա՛ն, մտնենք առագաստավոր նավ՝ պայծառ, խմենք գինիներդ բուրբ ու օծվենք յուղերովդ ազնիվ ու գնանք վայրենի կղզին, հրդեհենք նրան և խրախ, խելագար խնդանք ու պարենք այնտեղ, հարբած, հեթանոս պարենք ու խնդանք, խնդանք, խենթանք, խենթանք, այրվենք...

Տո՛ն է, տո՛ն, ամենատո՛ն...» (ՀԱՏ, 139):

Իսահակ Իսահակյանի «Հեքիաթ»-ը նորոգ ու խանդավառ կյանքի հիմնն է: Նոր ու ազատ կենցաղի ոգևորությունը «Հեքիաթ»-ում վերաժում է հեղափոխական պահանջի: Հեղափոխական տրամադրությունների խորհրդանշ պատկերը բնությունն է՝ անսասան տարերքը՝ քամին, որոտը, կայծակը, ավելի հաճախ՝ գարունը՝ որպես նոր կյանքի սկիզբ, իսկ ոգևորության շարժը «արյունն» է, «գինին» ու «տենդը». «Վարարվել են ջրերը հորդ, հոխորտ, ուռճացած են անպերը նյութերով և հյութերով հզոր, և հողը շնչում է շտապ» (ՀԱՏ, 125):

Բանաստեղծը աշխարհին ու մարդկանց հղում է միապաղաղությունից զերծ մնալու, առույգ կենսակերպի կանչը, հորդորում խիզախ, ներքին բարձր ու վեհ ոգեկոչումներով.

«Է՛յ, հե՛յ... խուսափի՛ր, ով հիվանդ է կամ ծեր, ով վախկոտ է՝ զգույշ-հրե-րով, արևով, հմայքով ու թույնով արշավում է, արշավում գարնան խենթությու-նը խուժ...» (ՀԱՏ, 125):

«Պոեմի հերոսն արտահայտում է պատմության ասպարեզ իջնող նոր սերնդի անպարտելի ուժը, անխորտակելի հավատը, սխրագործությունների պատրաստակամությունը»¹, - նկատում է Արամ Ինժիկյանը:

1 Արամ Ինժիկյան, «Մտերիմներ և մտորումներ», Եր., 1967, էջ 339:

Հեղափոխական տրամադրությունները խորանում են համընդհանուր շարժման, շաչ ու շառաչի, արևի և մասնավորապես «կարմիր»-ի բազմաթիվ կիրառություններով.

«Աշխարհը արևի տակ:

Ամբողջ խազմուզի պես եռող, հարբած ու հարբեցնող:

Ահա օրերը կանաչ ու կարմիր, կարմիր ու կանաչ շառայլող, շողող, շյուղով ու շողով:

Առավոտից շարժում ու շփոթ, աղմուկ, աղաղակ, շաչ ու շառաչ ...

Օրերը կարմիր ու կանաչ, կարմիր (պատերազմ արշավող գունդերը դրոշակներով, երգերով) (ՀԱՏ, 127):

Ջա՛ն,- արյունն է կարմիր,
Կրա՛կն է կարմիր,
Արև՛ն է կարմիր,
Ջահե՛լությունն է կարմիր,
Սերն է կարմիր (ՀԱՏ, 129):

«Մի պահ թվում է , թե Ղարսում մտած եղիշե Սողոմոնյանն է իր ապագա ռադիո-պոեմները մրմնջում»¹,- գրում է Նշան Մուրադյանը:

Խաղաղության, սիրո ու լուսավոր ապագայի ծանապարհն ուղղորդվում է ուժեղ կամքի ինքնադրսևորումներով. «...Ես հրաբուխ եմ, հրդեհ,- հայացքներս՝ հրարձակ, հպումներս՝ հորձք ...» (ՀԱՏ, 126):

Աշխարհի թոհուրոհի, իրարանցումների առջև զորեղ ու անվարան է բանաստեղծական հոգին: Նա է աշխարհի տերը: Իսկ այս պարզ գիտակցումն օգնում է նրան կյանքն ապրել յուրովի, «պայծառ ու խենթ»։ «Է՛յ, հե՛յ,- ահա ես կանգնել եմ աշխարհի վրա, աշխարհի մեջտեղը՝ հաստատ ու հզոր...:

Շահենի հայացքով չափում եմ ես աշխարհը, և ահա քայլում եմ հաղթական...» (ՀԱՏ, 126):

«Ջա՛ն, անանցյալ, անափսոսանք և գալիքին տիրական կամքս՝ օրենք, ցանկությունս՝ իրավունք, ես քայլում եմ արևի տակ կրկին մենակ, պայծա՛ռ, խենթ» (ՀԱՏ, 142):

Առույգ ու կենսահաստատ տրամադրությունների վերահաստատման հույսը Իսահակյանը տեսնում է երիտասարդների մեջ: «Հեքիաթ»-ի տարբեր մասերում գովերգում է երիտասարդական ավյունը, օրհներգում եռանդի, ոգևորության բնորոշ տարիքը՝ ջահելությունը, որը ոչ միայն կյանքի լուսա-

1 Նշան Մուրադյան, «Իսահակ Իսահակյան», Սովետական Հայաստան, 1967, N 3:

վոր, այլև ամենակարող շրջանն է. «Օրհնված լինեն բոլոր ժամփաները ջահելությամբ, որ տանում են բախտի դղյակը» (ՀԱՏ, 126):

«Թե ջահել ես՝ թագավոր ես. թագավորը կռվի մեջ է թագավոր» (ՀԱՏ, 142):

«Է՛յ, ո՞վ ջահել է, արի, ով ուժեղ է, խիզախ, ինչու՞ է դժգոհ, ինչու՞ է վհատ...» (ՀԱՏ, 144):

«Ձան, ջահելություն արեզնակերպ, արի, արեկ...» (ՀԱՏ, 144):

«Ձահելություն հզորագո՞ր, գորե՞ղ, հզո՞ր... » (ՀԱՏ, 144):

«Հեթախթ»-ի հաջորդական կարևորագույն հարցադրումը մարդասիրությունն է, որը պոեմի գերիշխող տրամադրություններից մեկն է: Մեծ ու անսահման սիրով բեռնավորված է առաջին հերթին ինքը՝ բանաստեղծը, որ սերն ընկալում է տիեզերական խորությամբ: «Ձան, ինչքան մեծ սիրտ է, որ խնդում է, խնդում աշխարհով մեկ ...» (ՀԱՏ, 126):

Ոչինչ չի կարող ընկժել բանաստեղծին: Ինչպիսին էլ լինի ժամանակը, դարն ու մարդկային միտքը, միևնույն է, ճա հաշտ ու խաղաղ է աշխարհի ու մարդկանց հետ: Վեհացող հոգում վերաժող ճվիրումն անեղծ ու ինքնաբուխ է. թվում է՝ այն չունի իր սահմանագիծը, դուրս է ու վեր սովորական մտածողությունից. «Եվ ես ահա՝ հաշտ ու հզոր, սիրով ու սեզ՝ չափում եմ շահենի հայացքով աշխարհը արևի տակ. և սիրտս մեծ է հիմա, աշխարհը լայն, արևը վես, և սիրտս աշխարհն է ու արևը՝ փարփառ, պայծառ, արևն ու աշխարհը՝ պերծ ու փարագուն» (ՀԱՏ, 136) :

Միշտ բարձր ու տոնական է փոխանցվելիք տրամադրությունը. չկա ափսոսանք անցյալի համար, բանաստեղծը չի դժգոհում ներկայից, իսկ գալիքին ուղղված հայացքը լի է հավատով, ինքնավստահ է ու համարձակ.

Ինչ որ անցել է՝ սուտ է,

Ինչ որ կա՝ լավ է,

Ինչ որ գա՝ թող գա (ՀԱՏ, 136):

Մարդասիրության խոհը հնչում է ինչպես աղոթք՝ ուղղված դարի ու ամբողջ մարդկությանը, ապրող ու հետագա սերունդներին. այն սեր է, ընթրում, հավատ է, ինքնայրում ու արարում: «Ձան, նետես սիրտդ աշխարհով մեկ, հորիզոններից հորիզոն, ձգվես, տարածվես, խոսես սրտանց ամեն մի շնչի, ինչի հետ, զգաս, հասկանաս, զգվես, գուրգուրես ամենին, և արևի տակ, արևի պես սիրո շառլ շառլալումով առատ, ջերմ փայես, փայփայես աշխարհը հանուր և արևի պես վառվես, վատնվես, ապրես, մեռնես աշխարհի մեջ, աշխարհի համար...» (ՀԱՏ, 142):

«Մի թարմ, կազդուրիչ հով է փչում այն պատանեկան խիզախ կանչերից, այն ինքնավստահ հրավերներից, որ նետում է հեղինակը դեռատի սերնդին:

ես զգում եմ վիատության մղձավանջից ազատված ապագա մարտիկների զուսպ ուժերի բաբախումը դեռ չամրացած կուրծքերի տակ. կարծես վարից բարձրանում են նրանք կյանքի բեմը՝ պայծառ, զորեղ ու նշանակալից մի դեր խաղալու. ի՞նչ ոգևորություն, ի՞նչ հմայիչ ինքնավստահություն»¹:

Ինքնանվիրումի, մարդասիրության ոլորտն ընդարձակվում, ստանում է գաղափարական նոր շեշտադրումներ: Բանաստեղծը հղում է աշխարհը սիրելու, գեղեցիկը գնահատելու, լավատեսության խորհուրդը. «Աշխարհը սեր է արևի տակ, սերը՝ հեքիաթ, կյանքը հեքիաթ է հեքիաթի մեջ, ջահելությունը՝ թագավոր ...» (ՀԱՏ, 144):

Իսկ կյանքում գեղեցիկն իրագործողը մարդն է, որն իբրև բանական էակ, կոչված է ոչ թե ապականելու, այլ՝ արարելու, արևի պես ինքն իրենով լուսավորելու աշխարհը:

«Է՛յ, մոտավոր, հեռավոր իմ ջահել եղբայր, միայն լսիր, միայն տես՝ արև, երկինք, ծով, ցամաք,- հեքիաթ է, հեքիաթ, թագավորի հեքիաթ, ու թագավոր ենք մենք ...

Ռու՛շ. բարձրացիր կարո՛ղ, տիրական և գոտեպինդ, հաստատ գնա ինքնիշխան, և սիրիր ու գնա, և սիրիր ու գնա ...

Ջա՛ն, ինչ է սերը ջահել սրտում... (ՀԱՏ, 144):

Կանգնած աշխարհի կենտրոնում, աշխարհի չորս կողմն ավի մեջ՝ «Ահա հյուսիս, արևելք, արևմուտք, հարավ», - բանաստեղծը բացում է լույսի և սիրո ուղենիշ ծանապարհը, պարտադրում ինքնուրույնություն՝ «քո բախտին դու տեր», ներշնչում ուժ, ինքնավստահություն և կամք՝ «բազուկդ հզոր և քո սիրտը մեծ», ողջ աշխարհն արևելու չափ տարողունակ, համապարփակ սեր՝ «ջա՛ն, այս արևի տակ սիրիր ու գնա, և արևի պես սիրիր ու գնա (ՀԱՏ, 145):

1 Նիկոլ Աղբալյան, «Իսահակ Իսահակյանի «Հեքիաթ արևի տակ»-ը, Հորիզոն, 1912, թիվ 260, էջ 222: